№ 17 Փետրվարի 6 (18) 1880 Փետրվարի 6 (18) № 17

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։ Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

„ՄՇԱԿ“
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
1880 թ-ին

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ԱՄԵՆ ՕՐ, բացի տօն և տօների հետևեալ օրերից։

Լրագրի դիրքը և պրոգրամմն նոյն են մնում։ Մենք ստանում ենք ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ «ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլ է, կէս տարվան 6 ռուբլ։ Գրվել կարելի է ՄԻԱՅՆ ԽՄԲԱԳՐԱՏԱՆ մէջ։

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐՆԵՐԸ ծախվում են 5 կոպէկով հատը։

Օտար քաղաքներից պէտք է դիմել հետևեալ հասցէով ТИФЛИСЪ Редакція «Мшакъ.

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսի միացած ընկերութիւնները։—Նոր գիրքին տեսութիւն։ Նամակ Երևանից։ Նամակ խմբագրին։ Նորքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Թիւրքիա։ Նամակ Թիւրքիայից։—«Մշակի» հեռագիրներ։ — Յայտարարութիւններ։— Բանասիրական։ Աշխարհիկ լեզուի մասին։

Կ. ՊՕԼՍԻ ՄԻԱՅԱԾ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

—

ԸՆԹԵՐՑՈՂԸ կը կարդայ մեր ներկայ համարում, որ ինչպէս մեզ տեղեկացնում են Կ. Պոլսից, այնտեղի ազգային երեք ընկերութիւնները միացել են վերջապէս։

«Մշակի» ներկայ համարից ընթերցողը կը տեղեկանայ նոյնպէս, որ երէկ մենք դարձեալ ուղարկեցինք «Արարատեան» ընկերութեան անունով 3000 ռուբլ զանազան նուիրատուութիւններից հաւաքած և որ մօտաւորապէս երկու տարվայ ընթացքում մենք ուղարկեցինք վերև յիշված ընկերութեանը 13,000 ռուբլ գումարը և յոյս ունենք, որ այժմ, երբ երեք ընկերութիւնների մի ընկերութեան մէջ միանալը դառնում է կատարված իրողութիւն, մենք միջոց կունենանք աւելի էլ մեծ գումարներ հաւաքել և ուղարկել Կ. Պոլսի ընկերութեանը։

Յայտնի է որ թէ երեք ընկերութիւնների՝ «Արարատեան», «Դպրոցասիրաց - Արևելեան» և «Կիլիկեան» ընկերութիւնների և թէ նրանցից գոյացած նոր միացած ընկերութեան նպատակն է՝ ուսում տարածել Հայաստանի մէջ։

Բայց յայտնի է նոյնպէս և այն, որ այս բօպէիս սարսափելի սով է տիրում ամբողջ Թիւրքաց Հայաստանում։

Ինչքան գովելի էր այդ ընկերութիւնների նպատակը Հայաստանի տնտեսական բարօրութեան ժամանակին, այնքան էլ, մեր կարծիքով, նրանց գործունէութիւնը, Հայաստանի ազգաբնակութեան լոկ ուսման վրա մնացելու ապարդիւն կը լինէր այժմ, երբ հայոց ազգաբնակութեան մեծ մասը մեռնում է սովից։

Եթէ Թիւրքաց Հայաստանի ամբողջ ազգաբնակութիւնը սովից մեռնի,—ո՞ւմ համար կը լինեն ընկերութիւնների ձեռքով հիմնած դպրոցները....

Այդ պատճառով մենք կարծում ենք, որ գոնէ ժամանակաւորապէս, մինչև որ Հայաստանի տնտեսական սարսափելի ճգնաժամը կանցնի, անհրաժեշտ կը լինէր որ Կ. Պոլսի ազգային ընկերութիւնները, եթէ ոչ իրանց ամբողջ գումարները, գոնէ իրանց գումարների մեծ մասը գործ դընէին ոչ թէ դպրոցների պահպանելու վրա, այլ սովատանջներին օգնելու վրա։

Եթէ ոչ, սովը անցնելուց յետոյ, նրանք հարկաւորութիւն էլ չեն ունենայ հոգալ Հայաստանի մէջ դպրոցներ պահպանելու մասին, որովհետև այն ազգաբնակութիւնը որ պահանջ ունի դրպրոցների մէջ, ոչնչացրած կը լինի սովի անգութ ներգործութեամբ։

Մենք կարծում ենք որ այս բօպէիս անգործնական և միամիտ կը լինէր մտածել դպրոցների մասին, երբ մեզ ամենքիս վրա պարտք է դրված թշուառ հայ ազգաբնակութեան առաջին և ամենաանհրաժեշտ կարիքը լցուցանել։

Մենք պարտաւորութիւն ենք համարում յիշել այստեղ, որ «Արարատեան» ընկերութեանը մեր վերջին ուղարկված գումարի մէջ կայ և մի փոքրիկ գումար, որ նշանակված է սովատանջներին օգնելու համար։ Բացի սորանից անցեալ տարի մենք ուղարկեցինք «Արարատեան» ընկերութեանը նրա միւս փոքրերի հետ միասին և 1000 ռուբլ, որոնք հաւաքված էին յօգուտ Վանի սովատանջների։

Բայց եթէ այդ էլ չը լինէր, Թիւրքաց Հայաստանի այժմեան ծանր դրութեան ժամանակ, Կ. Պոլսի միացած ընկերութիւնը պէտք է, մեր կարծիքով, բոլոր միացած հոգսերը առ ժամանակ թողնէր և մտածէր միմիայն թշուառ սովատանջներին օգնելու։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՇԽԱՐՀԻԿ ԼԵԶՈՒԻ ՄԱՍԻՆ

I

—

Ոչ ոք հերքել չէ կարող, որ այժմեան հայութեան մէջ եթէ կան ազգային հարցեր, որոնք իւրաքանչիւր հայ գործիչի խելքը զբաղեցնում են, դոցանից մէկը արդարև մեր աշխարհիկ, կենդանի, նորաբողջ լեզուն է, սորա կազմակերպութիւնը և զարգացումը, ասենք մինչև անգամ՝ նորա մանկան կրթութիւնն է։ Մեզ մօտ լինում է, ինչ ամեն տեղ եղել է։ Լեզուի կրթութեան մասին խորհում են թէ գրողները և թէ ոչ—գրողները. լրագիրներում, փողոցներում, բազարներում, հանդէսներում, կարճ՝ ամենուրեք այդ խեղճ մանուկը քնքոյշ զգուանքների առարկայ է դառնում. և կատարեալ իրաւունքով. լեզուն ազգային գանձ է, նա պատկանում է ամենքին, ուստի և մեզնից իւրաքանչիւրը ունէ չահ նորան լաւ կրթված տեսնելու։

Այս երկտողը հրատարակելու մեզ առիթ տուեց պարոն Դաղեանի մի յօդուածը, որը «Մշակում» երևեցաւ (տես 1879)։ Ներկայ գրուածքիս նրպատակը չէ հայկական աշխարհիկ լեզուի վերաբերեալ այն բոլոր նկատողութիւնները այստեղ առաջ բերել, որոնք, հարկաւ, ուշադրութեան արժանի կը լինէին. մի քանի ընդհանուր դիտողութիւններ և մեր խօսքերի բովանդակութիւնը արդէն սպառուած կը լինի։ Որեմն խոնարհաբար կը խնդրենք յիշեալ հեղինակին այս գրուածքը բանակռուութեան տեղ չընդունել. իսկ եթէ այստեղ քննված հարցերը մօտաւորապէս նոյն դասաւորութեան են հետևում, ինչպէս որ նորա գրուածքի մէջ ենք գտնում, այդ միայն խօսքը մինչ անվերջ չերկարացնելու մտքով է արած։

Գրական լեզուի բարձր արժէքը զգում է և խոստովանվում իւրաքանչիւրը, ով իր կեանքում գէթ մի հատիկ նամակ գրելու առիթ է ունեցած։ Բայց ոչ ամեն ոք մի և նոյն տեսակէտից է նայում գրական լեզուի զարգացման վրա։ Այդ նորանից է, որ լեզուի էութիւնը չատերին դեռ պարզ չէ։ Լեզուն ազգի հանճար է, նորա մէջ երևում են նաև ազգի ճաշակը, նորա մտածողութեան եղանակը, նորա հակումները. սուր աչքը և գիտնական ուսումնասիրութիւնը կարող են գտնել նորա մէջ նոյն ազգի անցեալն անգամ։ Առանց գիտենալու, մեզնից իւրաքանչիւրը զգում է այդ և այդ է պատճառը, թէ ինչու մայրենի լեզուն այնքան քաղցր է թվում և անմոռանալի նորա համար, ով նորանով կրթված է։ Այդ է պատճառը, թէ ինչու զանազան ազգեր, իրարից որոշ բնաւորութիւն, ճաշակ, հակումն և պատմական անցեալ ունենալով, նոցա լեզուները իրարից նմանապէս որոշ ուղղութիւն, որոշ հոգի ունեն։ Այս ճշմարտութիւնը ըմբռնելու համար մեծ կարիք չը կայ անպատճառ գիտնական լեզուագէտ լինել. բաւական է մի քանի օտար լեզուներ ուսումնասիրած լինել, մանել, այսպէս ասած, նոցա հոգու մէջ և փոքր ինչ փիլիսոփայական աչք ունենալ նոցա միմեանց հետ համեմատելու համար։ Անզգայացու գործնական բնաւորութիւնը ստեղծել է նաև նորա գեղաբարոյութիւններից և բաղդրութիւններից զատ քերականութիւնը. ֆրանսիական լեզուի փոքրավանկ և ներդաշնակ բառերը և նախադասութիւնների պարզ ձևերը արդէն ցոյց են տալիս այդ ազգի նուրբ ճաշակը և մտածողութեան պարզ և ամենամատչելի եղանակը։

Ով չէ լսած գերմանացու սէրը միշտ մաքին և ճշդութեան յարմար բառեր ստեղծել, իսկ նախադասութիւնների մէջ, մաքերի ովկիանոսի մէջ լողալով, կէտը դնել միայն այն ժամանակ, երբ նաւը անթիւ ալեկոծութիւններից յետ վերջապէս նաւահանգիստը կը հասնի։ Այդ գերմանական հանճարն է, որը իր կնիքն է դրած իր լեզուի վրա. ճիշդ՝ բայց անճաշակ *), բանաստեղծական՝ բայց մութը։

Եւ մեր լեզուն ևս է և պիտի լինի մեր հայկական հանճարի ծնունդը. մեր կնիքով պիտի դրոշմենք մեր արարածը, դրա մէջ մասնակցում է ազգը, ամբողջ ազգը, եթէ սա մի հոգու, մի և նոյն ձգտումների, ուրեմն և մի հոգու տէր է։ Ազգը թէպէտ ամբողջապէս չէ խօսում, բայց նա պատրաստում է ազգի գաւակներ, որոնք գրողների դէմքերով նոյն ձգտումների տէրեր են, ինչպէս ամբողջ ազգը ինքը։ Գրողը վերցնում է լեզուն նախ այնպէս, ինչպէս սա կայ. նա կարող է, ի հարկէ, դառնալ նաև կրթող, մինչև անգամ ստեղծող. բայց նա կը փոխէ կամ կը ստեղծէ միայն այն, ինչ կարող է ըղխել ազգի մէջ արդէն եղած տարրերից և կամ այն, ինչ ազգը կարող է ընդունել, հաւանել և ըստ այնու իրան սեպհականացնել։

Այս ընդհանուր դատողութիւնները մենք անհրա-

*) Ինչպէս մի նոր-նախիջևանցի անուանում է խաղալու տուռը՝ թղթախաղարան. դրան կասեն գերմանական անհամութիւն։

թիւն հասցնելու մասին։ Եթէ ոչ յետոյ ապարդիւն կը լինէր հոգալ դպրոցների գոյութեան մասին։

Վերջացնում ենք մեր խօսքը, առաջարկելով որ միացած ընկերութիւնների առաջին գործը լինէր օգնել իրանց սովատանջ եղբայրներին թէ իրանց ձեռքում ունեցած դրամներով, և թէ հաւաքելով այդ նպատակի համար նոր նուիրատուութիւններ։

Թէ «Արարատեան» յարգելի ընկերութիւնը և թէ մանաւանդ նոր կազմված զօրեղ և միացած ընկերութիւնը այնքան հեղինակութիւն են ստացել արդէն ամբողջ աշխարհի հայերի աչքում, որ մեր կարծիքով ամենանպատակայարմար բան կը լինէր նոյն իսկ այդ ընկերութիւններին ուղարկել յօգուտ սովատանջների հաւաքվող նուէրները։

Մենք հաւատացած ենք որ ոչ ոք այնքան լաւ չէ կարող կարգադրել յօգուտ սովատանջների ուղարկվող դրամները, որքան Կ. Պոլսի մեր երեք յարգելի ընկերութիւնները, մանաւանդ որ այժմ նրանք միացել են մի կենտրոնական մարմնի մէջ։

Մենք մեր կողմից ուրախութեամբ յանձն կառնենք հասցնել բոլոր նուէրները յօգուտ Հայաստանի սովատանջների՝ առ ժամանակ «Արարատեան» ընկերութեան վարչութեանը, իսկ յետոյ, երբ միացած նոր ընկերութիւնը իր պաշտօնական անունը կը ստանայ, կը հասցնենք այդ նուիրատուութիւնները նոր ընկերութեանը։

Թող մեր յարգելի ընկերութիւնները մտածեն այն բնական օրէնքի վրա, որ երբ մարդը հաց է խնդրում, երբ նա սոված է, երբ նա կանգնած է երես առ երես սովից մեռնելու ահռելի և անողորմ անհրաժեշտութեան առջև,—նա ընդունակ չէ մտածել որ և է ուսման մասին։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

—

Յունվարի 26-ին

Ցայտնի է, որ անցեալ 1879 թուականի երաշտութիւնը, մկների, մարեխների առատութիւնը մեծ հարուած տուեցին Անդրկովկասի մեծ մասին։ Այդ հարուածը ամենասարսափելի կերպով զգացվում է այժմ, ձմռան բացուն, գանձակի, մասամբ Թիֆլիսի և Երևանի նահանգներում։ Առաւելապէս Երևանի նահանգի ժողովուրդը սարսափած ցորենի՝ այդ ամենագլխաւոր կենսական պիտոյքի պակասութենից, չը գիտէ, թէ ինչ անէ, ինչպէս ապագայումիր գոյութիւնը պահպանէ։ Եւ այժմ Երևանի քաղաքային վարչութեան, Դումայի ուշադրութիւնը ամբողջապէս գրաւվումէ հացի խնդրով։ Վերջին օրերս, այս տասն օրվայ մէջ, երեք, չորս անգամ թէ արտակարգ և թէ օրինաւոր նիստ է լինում։ Վերջին նիստը, շարունակութիւն լինելով առաջինների, ունեցաւ այն եզրակացութիւնը, որ անպատճառ 12 հացագործների խանութներ բացվեն, որոնցից ամեն մինը պէտք է ստանայ քաղաքային վարչութենից 2—3 մասը այն ալրի կամ ցորենի, որ բաւական լինի մի օրվայ թխելու համար. իսկ 1/3 մասը օրական թխելու հացի իրանք խանութապանները ստանալով, պարտաւորվեն հաց բաժանել ժողովրդին։ Տասներկու հացագործների խանութներից երկուսը առանձնապէս նշանակված են ամենաաղքատ ընտանիքների համար, որոնք առանձին տոմսակներով կը դիմեն այդ երկու խանութները և կը պահանջեն իրանց օրական պարէնը ոչ այն նիշով (такса) որ գնելու է միւս հարուստ, կամ աւելի լաւ է ասել, կարողութիւն ունեցող դասակարգը։ Աղքատների համար նիշը իջեցրած է մինչև չորս կոպէկ ֆունտը, իսկ հարուստների համար բարձրացրած է մինչև 6 կոպէկ ֆունտը։ Այդ վերջին գնի բարձրացնելու պատճառը այն էր, որ հացագործները հաւատացնում էին, թէ այդպիսով նրանք խոստանում են, որ այնուհետև անկարգութիւն չի լինի հաց բաժանելու միջոցին։ Բայց հարցը նորանումն է թէ արդեօք երկար ժամանակ կարող է քաղաքային վարչութիւնը ցորեն կամ ալիւր բաժանել հացագործներին։ Եթէ նա երկար չէ կարող, գոնէ ամեն ձիգ, աշխատանք գործ է դնում ցորեն ձեռք բերելու։ Առ այժմ քաղաքային վարչութիւնը ստացած ունի էջմիածնից 100 խալվար. գնած է մասնաւոր մարդիկներից դարձեալ 50 խալվար։ «Кавказъ» լրագիրը վերջին համարում հաղորդեց, որ փոխարքայի հրամանով չուտով ճանապարհ է ցցվում մի 10,000 պուդ ցորեն. բացի սրանից մարդասիրական զգացմունքը դրդել է Նորին Բարձրութեանը յանձնել 39,000 մանէթ Երևանի փոխնահանգապետին, որ նա տնօրինի այդ փողերը այնպէս, ինչպէս ինքը արժան կը համարի։

Առ այժմ այսպէս է Երևանի ժողովրդի դրութիւնը, իսկ յետոյ ինչպէս կը լինի չը գիտենք։

Յովհաննէս—Հէթում

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Ախալցխա, 30 յունվարի

Ամսոյս 27-ին մի հարանեաց հանդէսի ժամանակ (ուսուցիչ պ. Ա. Սարայտարեանցի տան մէջ) խօսակցութեան նիւթ դառնալով իմ և ձեր լրագրի մշտական աշխատակից մեծ. Գր. Նիկողոսեանի մէջ տեղադրված հրատարակվող հայ լրագրութիւնը, ծագեցաւ մեր մէջ միտք նրանց գոյութիւնը պահպանելու փոքրիկ պատճառ դառնալու նպատակաւ օժանդակութիւն ձգել լրագրութեան այն մեծածախք դանձանակի մէջ, յուսալով որ մեծապատիւ խմբագիրների կողմից ընդունելութիւն կը գտնի, ինչպէս այրի կնոջ մի լումայն։ Ցաղացած միտքը կայանում էր հետեւեալ կէտի վրա. կազմել 30 կամ 40 անձանց մի ցուցակ, որոնք յօժարակամ լինեն նուիրել ամսական տասնական կամ քսանական կոպէկ յօգուտ Թիֆլիսի հայ լրագիրների և այդ գոյացած գումարով խնդրել խմբագիրներից ուղարկել իրանց հրատարակած լրագիրների համարներից այնպիսի քաղաքներ և գիւղեր, ուսումնարաններ կամ այն անձանց, որոնց իրանք արժան կը դատեն։ Այս գործին սկիզբն տալու համար պ. Ց. Գեղամեանցը առաջարկեց հանդիսականներին մասնաւոր օժանդակութիւն անել այնտեղ և եթ, որից գոյանալով 14 ր., յանձնվեցաւ ինձ հասցնել այդ գումարը ձերդ յարգութեան, որպէս զի այդ գումարով «Մշակի» համարներից մի օրինակ ձեր ընտրութեամբ ուղարկվի լրագրի կարօտ տեղեր կամ ուղարկել տեղիս Եղիսաբէթեան օրիորդների ուսումնարանին, որովհետև այն ուսումնարանը ունի 6 հատ օրիորդ վարժուհիներ, որոնք գրեթէ զուրկ են լրագիրների ընթերցասիրութիւնից։ Ուստի ահա այդ գումարից տասն ռուբլին ուղարկում եմ ձեզ յիշեալ նպատակաւ, թողնելով չորս ռուբլին առ այժմ ինձ մօտ մինչև որ այդ գումարի վրա բարդուի այնքան դրամ, որ կազմվի տարեկան մի բաժանորդագին։

Աբրահամ քահանայ Ղազարեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մօտաւորապէս երկու տարվայ ընթացքում, այն է մայիս ամսից 1878 թուի մինչև այսօր ուղարկեցինք Կ. Պոլսի «Արարատեան» ընկերութեանը 10,000 ռուբլի։ Անցեալ 1879 թուի վերջերում այդ ամբողջ գումարը ուղարկելուց յետոյ մնում էր խմբագրութեան մէջ մնացորդ 916 ր. 57 կոպ.։ Դորանից յետոյ հաւաքվեցաւ դարձեալ 2912 ր. 7 կոպ., իսկ յիշեալ 916 ր. 57 կոպ. գումարի հետ, անում է 3828 ր. 64 կոպ.։ Այս գումարից երէկ ուղարկեցինք «Արարատեան» ընկերութեան վարչութեանը 3000 ր., մնում է խմբագրութեան մէջ 828 ր. 64 կ., որից 53 ր. հանելով, որ եղաւ ընկերութեան «Տեղեկագիրը» մաքսատանից ստանալու և փոստով ամեն տեղ ուղարկելու ծախս, մնում է, ուրեմն, խմբագրութեան մէջ 775 ր. 64 կոպ.։ Ուրեմն մօտաւորապէս երկու տարվայ ընթացքում ուղարկեցինք «Արարատեան» ընկերութեանը «Մշակի» միջնորդութեամբ 13,000 ռուբլի գումարը։

—

Կիրակի, փետրվարի 10-ին, պ. Ալավիանակի կրկին կոնցերտ է տալիս Արծրունու թատրոնում,

—

Կ. Պոլսից մեզ հաղորդված տեղեկութիւններից երևում է որ այնտեղի ազգային երեք ընկերութիւնները արդէն միացել են։ Այժմ երեք միացած ընկերութիւնների ընդհանուր ժողովը պէտք է կազմվի և այդ ընդհանուր ժողովի մէջ պէտք է վճռվի միացած ընկերութեան անունը։

—

Վաղը, հինգշաբթի օր, փետրվարի 7-ին, լինելու է Արծրունու թատրոնում ռուսաց սկրոզների ներկայացումն յօգուտ պ. Գօրսկու։ Կը խաղան Կրիլովի «Къ Мировому» երեք գործողութեամբ կօմէդիա և մի վոդէվիլ։ Անտրակտներում կածի պ. Վէտօշնիկովի օրկէստրը։ Ներկայացման սկիզբը 8 ժամին։

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են յունվարի 31-ից «Հայը այս օրերս մի փոքր առատացաւ։ Ս. Էմիածնից բերած ցորենը բաւական նպաստեց գորան։ Երէկ մի թուրք (татаринъ) հացթուխի խանութում պոլիցիան գտաւ որ հացի խմորի հետ խառնված էին բրինձի մնացորդք և սղոցած փայտի թեփը։ Քննութիւնը նշանակված է։ Նշանաւոր է որ այդ թուրք պարոնը մեր Դումայի մեծ մեծ խօսող ձայնաւորներից մէկն է։»

—

Ընթերցողների ուշադրութիւնը դարձնելով ներկայ համարի մէջ տպված Աբրահամ քահանայ Ղազարեանի ԱԽԱԼՑԽԱՅԻ նամակի վրա, հարկաւոր ենք համարում յայտնել, որ ուղարկված 10 ռ փոխարէն «Մշակ» կուղարկենք Ախալցխայի Եղիսաբէթեան օրիորդաց ուսումնարանին։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐՔԻԱ

—

Հէնրի Լէյարդ վերջին օրերս խղճի ազատութեան համար պատերազմ էր հրատարակել պալատի դէմ. Ճակատամարտը վերջացաւ մի վիրաւորվածով և մի սպանվածով, ինչպէս տեսնում էք, կորուստը շատ մեծ չէ։ Չը նայելով որ կորուստն այնքան մեծ չէ, բայց նա շատ զգալի է, որովհետև վիրաւորվածն է նոյն իսկ ինքն—Լէյարդը, իսկ սպանվածն է նրա օրգանը—«Commercial Adver-

ժեշտ համարեցինք յայտնելու ոչ իբրև նորութիւն, այլ միայն այն նպատակով, որ ընթերցողը նոցա չը մոռանայ, երբ խօսքը աշխարհիկ լեզուի մասին է։ Բայց մի և նոյն ժամանակ այդ ընդհանուր հայեացքից բղխում են հետևանքներ, որոնք սերտ կապ ունեն մեզ այժմ հետաքրքրող հարցի հետ։

Շատերը զարմանում են և նոցա մինչև անգամ ջիգրն էլ է գալիս, որ մեր գրական լեզուն չէ ընդունում բազմաձև բառերի և կամ սոցա վերջաւորութիւնների մի տեսակը, ինչ օտարոտի պահանջմունք.... Բառերի և կամ սոցա տեսակ-տեսակ վերջաւորութիւնների մի կերպը ընդունելը հեշտ բան չէ. սորա համար պահանջվում է ոչ թէ մի անձի կամ մի գրողի կամքը, այլ ամբողջ հասարակութեան ընտրողութիւնը. ընտրողութիւն, որը աչքով տեսնել անկարելի է. նա յայտնվում է գրականապէս կրթված հասարակութեան մէջ։ Մի երկու օրինակներ այս միտքը աւելի կը պարզեն քան բոլոր փիլիսոփայութիւնները։ Նրանք—նոքա, որը սոցանից պիտի որպէս ուղիղ ընդունել։ Այս բոպէիս այդ երկու ձևերն էլ ընդունված են թէ հասարակ խօսակցութեան և թէ գրութեան մէջ։ Բայց այդ տատանման վերջ կը դնի միայն ժամանակը և այդ՝ այսպէս։ Գրական լեզուի դեռ կատարեալ մանկութեան ժամանակ ոչ թէ երկու, այլ երեք, չորս, հինգ, վեց և աւելի վերջաւորութիւններ կարող են պատահել, ինչպէս՝ նրանք, նոքա, էնոնք, մինչև անգամ էնդոնք։ Այստեղ իշխում է գաւառականութիւնը իր լիակատար խառնիճաղանճ ձևերով։ Այդ չորս, գուցէ և հինգ-վեց այլ ձևերը մրցում են իրար հետ. բայց թէպէտ և այդ բոլորն էլ ազգային են, այնու ամենայնիւ ազգի ընտրելագոյն ճաշակը չնորհում է միայն երկուսին գերազանցութեան մրցանակը։ Կռուի դաշտում մնում են միայն երկուսը իրար դէմ յանդիման՝ նրանք և նոքա, ինչ պատահեց առաջինների հետ, նոյնը կը լինի և այս երկուսի հետ։ Մենք այժմ այն չրջանումն ենք, երբ արդէն կարելի է բաւական պարզ նշմարել, որ գրական լեզուի մէջ «նոքա» կը յաղթեն «նրանց»։ Հարկաւոր է արդեօք յիշել, որ այս հանգամանքների մէջ մի օրէնք է իշխում, որը բնական և փիլիսոփայական գիտութիւնների մէջ արդէն վաղուց գործադրութիւն է գտել։ Դարվինի «Բնական ընտրողութեան» օրէնքը այստեղ անհերքելի է։ Նոյն օրէնքի համեմատ մեր լեզվում անյայտանում են և ծնվում ամբողջ բառեր։ Մի ժամանակ կարելի էր կարդալ. «սկի տուն չը մտած, ըսկըսեց....», յետոյ պարոն «Մկիտ»-ն եղբայրացրեց իրան մի աւելի գեղեցիկ բառ՝ դեռ. այնպէս որ կարելի էր գրել, ինչպէս այժմ ևս շատ տեղերում խօսում են. «սկի դեռ, չը մտած....», իսկ այժմ ոչ ոք այլապէս չէ գրում, եթէ ոչ՝ «դեռ տուն չը մտած.»

Ով կարդարեց այս և սոյնանման փոփոխութիւնները. մի գրող, թէ մի լրագիր....

Ասացինք լրագիր և մի բոպէ կանգ առնենք լրագրի դէպի գրական լեզուն ունեցած պարտականութեան վրա։ Լրագիրը պիտի ունենայ մի ուղղութիւն լեզուի վերաբերեալ։ Ահա մի միտք, որը ծափահարութեան արժանի է։ Բայց միայն մի պայմանով ուղղութեան և լեզուի որոշ կանոններ չը խառնել միմեանց հետ։ Ակնյայտնի է, որ այդ երկու գաղափարները իրարից շատ տարբեր են։ Մի լրագիր կարող է մի որոշ ուղղութիւն ունենալ, յայտնելով. «իմ թերթի մէջ կարելի է գրել այն գրական լեզուով, որը այժմ ընդունված է. բայց որովհետև այժմ ընդունված է ասել «կարդոմ» և «կարդոմ», բայց չէ ընդունված «կարդոմ», ուստի ես կարդալիմ թերթում այս վերջին ձևի գործածութիւնը։» Բայց եթէ նոյն թերթը հրատարակ ուրիշներին անպատճառ «նրանք» գրել և ոչ «նոքա», ձիեր և ոչ ձիաներ, մարդեր և ոչ մարդիկ, այդ կը դառնայ կատարեալ քմածութիւն։ Ցանկալով միութիւն հաստատել, նա արուեստական կերպով կը ծնեցնէ կուսակցութիւններ, որոնք տարիներով կը վիճեն ոչ թէ դրած հարցերին վերջնական լուծումն տալու, այլ նորա համար միայն, որ այնքան տարիներից յետ վերջապէս համոզվեն իրանց դատարկամոլութեան և ցնդամտութեան մէջ։

Բայց հետևողաբար մտածելով, մենք դեռ ուրիշ հրէշային երևոյթների կը հանդիպենք. մի գրող, որի լեզուն «Մշակի» դիցուք թէ հաստատ որոշած քերականական կանոններին չէ համաձայնվում, բայց որը «Մշակի» միւս ձգտումներին հաւանում է, չը պիտի մասնակցէ այդ լրագրին, դա կը նշանակէ զոհել գաղափար ոճին....

Թող չը կարծէ ընթերցողը, թէ մենք ամենին կշիռ չենք դնում առանձին գրողների ազդեցութեան վրա. քաւ լիցի. այդ ազդեցութիւնը կարդարն հերքել անկարելի է։ Բայց նրան մեծ նշանակութիւն տալ—նմանապէս անկարելի է։ Նա ունէ իր չափը և սահմանը և ըստ մեծի մասին ժամանակաւոր է և ոչ տևողական։ Ոչ այս և ոչ այն ձգտումներից, ինչ լեզուի կը վերաբերվ, մենք մեծ վտանգներ չենք սպասում, բայց դորանով դեռ չէ ասուած, թէ նոքա ուշադրութեան անարժան են։ Ուրեմն մի քանի խորհրդածութիւններ այդ առիթով գուցէ անտեղի չը լինեն. մենք կը սահմանափակվենք ի հարկէ չօչափելով նոցանից մի քանիսը, որոնք մեզ այժմ հետաքրքրող հարցերին աւելի մօտ են կանգնած։

(Կը շարունակվի)